ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՊԵՏՐՈՍՅԱՆ Ք. Ռ.

Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման, հեռանկարային ծրագրերի մշակման ու իրականացման գործում նշանակալի դեր է ունեցել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն (այսուհետև՝ Սփյուռքի կոմիտե): Լինելով հասարակական կազմակերպություն՝ Սփյուռքի կոմիտեն կարճ ժամանակամիջոցում դարձել է Խորհրդային Հայաստանի առաջատար կառույցներից մեկը, որին նպաստել է պետական բարձրագույն հոգածությունը. կառույցը ղեկավարել է ՀԿԿ Կենտկոմը, իսկ Սփյուռքի հետ հարաբերությունները կարգավորվել և վերահսկվել են ԽՄԿԿ Կենտկոմից: Սփյուռքի կոմիտեի գործունեության ակտիվացմանը նպաստել են նաև սերտ կապերը Մոսկվայում ստեղծված արտասահմանի հայրենակիցների հետ մշակութային կապերի խորհրդային «Ռոդինա» կազմակերպության հետ:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծման մասին որոշումը ՀԿԿ Կենտկոմի նախագահությունն ընդունել է 1964 թ. ապրիլի 10-ին[1], ըստ որի՝ կոմիտեի առջև դրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- *ԽՍՀՄ արտաքին և ներքին քաղաքականության հիմնական դրույթների պարզաբանումը.*
- *Խորհրդային Հայաստանի քաղաքական և տնտեսական նվաճումների լուսաբանումը.*
- *ազգային հարցի արդարացի լուծման, Խորհրդային Միությունում գիտության, մշակույթի և արվեստի ծաղկման համակողմանի լուսաբանումը.*
- *Խորհրդային Հայաստանի հանդեպ սփյուռքահայերի մեջ հայրենասիրության սերմանումը.*
- *հակախորհրդային խմբերի, կազմակերպությունների ու առաջին հերթին՝ ՀՅԴ գործունեության մերկացումը.*
- *արտերկրի «առաջադիմական կազմակերպությունների և հայրենակցական միությունների» հետ կապերի ստեղծումն ու աջակցությունը, ղեկավարների հրավիրումը.*
- *սփյուռքահայերի շրջանում թերթերի, ամսագրերի, դպրոցների համար ուսումնական ձեռնարկների, հուշամատյանների ու այլ հրատարակությունների հրատարակությունն ու տարածումը, ինչպես նաև գեղարվեստական և այլ գրակա-*

---

[1] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1, ց. 44, գ. 42, թ. 95-97:*

նության, շարժանկարների, երաժշտական ձայնագրությունների և այլնի առաքումը.

- *սփյուռքահայերի համար հատուկ ռադիոհաղորդումների կազմակերպումը.*
- *առաջադիմական կազմակերպությունների ակտիվիստների երեխաների՝ ՀԽՍՀ միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսման և պիոներական ճամբարներում հանգստի կազմակերպումը.*
- *պատվիրակությունների, ստեղծագործական կոլեկտիվների և մշակույթի, գիտության, գրականության և արվեստի առանձին գործիչների այցերի կազմակերպումը հայահոծ հայկական համայնքներ՝ հայրենասիրական և մշակութային-լուսավորական աշխատանքի անցկացման նպատակով.*
- *խորհրդային քաղաքացիներին Սփյուռքի հայկական համայնքների կյանքի և գործունեության հետ ծանոթացումը, սփյուռքահայ գրողների երկերի հրատարակումը:*

Այս խնդիրները կյանքի կոչելու համար համապատասխան բոլոր պետական կառույցները պարտավորվում էին աջակցել Սփյուռքի կոմիտեին: Ինչպես տեսնում ենք, սկզբնական շրջանում Սփյուռքի կոմիտեի գործառույթները հիմնականում ունեին գաղափարական, քարոզչական ուղղվածություն, որը, անշուշտ, պայմանավորված էր ԽՍՀՄ պետական համակարգի դրվածքով:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն ստեղծվեց 1964 թ. մայիսի 26-ին ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշմամբ[2]: Կոմիտեի նախագահ նշանակվեց պատմաբան Վարդգես Համազասպյանը, որը պաշտոնավարեց 1964-1985 թթ.[3]:

Սփյուռքի կոմիտեի կանոնադրությունը[4], կառուցվածքը և հաստիքները ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը հաստատեց 1964 թ. ապրիլի 28-ին[5]: Նույն թվականի հունիսի 25-ին Երևանում տեղի ունեցավ Կոմիտեի հիմնադիր ժողովը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի և Մարտիրոս Սարյանի մասնակցությամբ[6]: Ընտրվեց 71 հոգուց բաղկացած կոմիտե, որի կազմից՝ 15 հոգուց բաղկացած նախագահություն:

Ստեղծման օրվանից Սփյուռքի կոմիտեն անվանական և կառուցվածքային էական փոփոխություններ չի կրել: Միայն ժամանակ առ ժամանակ Հայաստանի

---

[2] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 94, գ. 191, թթ. 1-2, նույնի՝ գ. 192, թ. 2, նույնի՝ ֆ. 875, ց. 1, գ. 2, թթ. 1-2:*

[3] *Վ. Համազասպյանից հետո Սփյուռքի կոմիտեի նախագահներ են եղել Կարլեն Դալլաքյանը (1985-1991) և Հրաչիկ Սիմոնյանը (1991-1993):*

[4] *Կոմիտեի երկրորդ կանոնադրությունն ընդունվել է 1967 թ. և առաջինի նման խնդիր էր դնում համագործակցել միայն Սփյուռքի «առաջադիմական և հայրենասիրական» կազմակերպությունների հետ:*

[5] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 43, թ. 40:*

[6] *ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 11, թթ. 1-18:*

կառավարությունը Կոմիտեի հնարավորությունները Սփյուռքի հետ կապերի ամրապնդման ուղղությամբ առավել իրատեսական դարձնելու նպատակով որոշակի փոփոխություններ էր կատարում Կոմիտեի կառուցվածքում, ստեղծվում էին նոր բաժիններ, հաստատվում նոր հաստիքներ, կատարվում ճշգրտումներ ու հավելումներ կառույցի ֆինանսական հարցերում:

1990 թ. հաստիքային ցուցակի[7] համաձայն՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հիմնական բաժիններից էին՝

1. Նախագահություն[8], 2. Հատուկ բաժին, 3. Ամերիկյան երկրների բաժին, 4. Ասիայի և Աֆրիկայի երկրների բաժին, 5. Եվրոպական երկրների բաժին, 6. Մամուլի բաժին, 7. Լրատվական խումբ, 8. Երիտասարդական կազմակերպությունների բաժին, 9. Նյութական արժեքների բաժին, 10. Գիտատեխնիկական կապերի բաժին, 11. Առաքման բաժին, 12. «Վերածնված Հայաստան» հանդեսի[9] խմբագրություն, 13. «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի[10] խմբագրություն:

1991 թ. Կոմիտեի կազմում ստեղծվեց ներքին Սփյուռքի բաժինը, որը զբաղվում էր ԱՊՀ երկրներում, մասնավորապես Ռուսաստանում հաստատված հայության խնդիրներով:

Կոմիտեին կից հասարակական կարգով գործում էին նաև մի շարք հանձնախմբեր[11], որոնցում ընդգրկված էին հանրապետության անվանի մտավորականներն ու գործիչները.

1) Հայկական հայրենակցական միություններին աջակցող[12] (նախագահ՝ Վաղարշակ Նորենց)

2) Ժողովրդական կրթության (Սփյուռքի հայկական դպրոցների կապերի հանձնախումբ)

3) Գրականության (նախագահ՝ Սիլվա Կապուտիկյան)

4) Արվեստի[13] (նախագահ՝ Ռուբեն Զարյան)

---

[7] Նույն տեղում, ց. 16, գ. 49, թթ. 1-10:

[8] Հաստիքացուցակի համաձայն՝ Կոմիտեի նախագահն ուներ 3 տեղակալ:

[9] Սփյուռքի կոմիտեի «Վերածնված Հայաստան» հասարակական-քաղաքական և գրական-գեղարվեստական ամսագիրը լույս է տեսել 1989 թվականից Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի 1988 թ. հունիսի 10-ի որոշման հիման վրա: Փոխարենը դադարեցվել է «Սովետական Հայաստան» ամսագրի հրատարակումը (ՀԱԱ, ֆ. 113, ց. 160, գ. 297, թթ. 3-4): Կոմիտեի 1990 թ. նոյեմբերի 23-ի նիստում «Վերածնված Հայաստան» հանդեսը որոշվել է վերանվանել «Հայրենի եզերք» (ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 46, թ. 118):

[10] Կոմիտեի պաշտոնաթերթ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. օգոստոսի 1-ին: Թերթը լույս է տեսել 1965-1996 թթ. ընթացքում:

[11] ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 3, թթ. 32-39: **Հարությունյան Ա.,** *Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և երկրորդ հանրապետությունը, Ե., 2015, էջ 84-85:*

[12] Սփյուռքում 1964 թ. դրությամբ գործում էին ավելի քան 30 հայրենակցական միություններ, որոնք հիմնականում գտնվում էին ԱՄՆ-ում (ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 3, թթ. 32-39):

[13] Արվեստի հանձնաժողովն իր հերթին ուներ հետևյալ մասնաճյուղերը. երաժշտության (նախագահ՝ Էդգար Հովհաննիսյան), ճարտարապետության (նախագահ՝ Վարազդատ

5) Մանկավարժական (նախագահ՝ Ավետիս Ճուղարյան)
6) Հայագիտական (նախագահ՝ Լևոն Խաչիկյան)
7) Երիտասարդական-պատանեկան[14] (նախագահ՝ Վարդգես Պետրոս-յան)
8) Սպորտի (նախագահ՝ Հրանտ Շահինյան)
9) Կանանց (նախագահ՝ Մարո Մարգարյան):

Սփյուռքի կոմիտեի ստեղծումն առանցքային դարձավ Հայրենիք-Սփյուռք կապերի նորովի հաստատման և ամրապնդման ուղղությամբ: Գործունեության հենց առաջին տարիներից Կոմիտեն ակտիվ կապեր հաստատեց Սփյուռքի բազմաթիվ կազմակերպությունների, հայրենակցական, բարեգործական, մշակութային միությունների, դպրոցների, ակումբների, թերթերի, հանդեսների խմբագրությունների և բազմաթիվ անհատ գործիչների հետ: Տարեցտարի համագործակցության շրջանակներն ընդլայնվում էին՝ դառնալով առավել շոշափելի և հեռանկարային: Ակտիվ էին կապերը հատկապես Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ), Ռամկավար ազատական (ՌԱԿ) և Սոցիալ դեմոկրատ հնչակյան (ՍԴՀԿ) կուսակցությունների, Թեքեյան մշակութային միության (ԹՄՄ) հետ: Եթե 1958 թ. Խորհրդային Հայաստանը կապեր ուներ 23 երկրի 53 կազմակերպության հետ[15], ապա 1964 թ. հոկտեմբերի դրությամբ՝ Սփյուռքի մոտավորապես 600 կազմակերպությունների՝ մշակութային միությունների, դպրոցների, թերթերի ու հանդեսների խմբագրությունների, ակումբների, հայրենակցական միությունների, ինչպես նաև անհատ գործիչների, գրողների, գիտնականների, արվեստագետների հետ և այլն[16]: Իր հիմնադրումից 6 ամիս անց Կոմիտեն մշտական կապ էր պահպանում Սփյուռքի 852 կազմակերպությունների՝ մշակութային ու հայրենակցական միությունների, դպրոցների, խմբագրությունների և անհատ գործիչների հետ[17]: 1965 թ. վերջին Սփյուռքի կոմիտեն արդեն կապեր ուներ 1400[18], իսկ 1966 թ. կեսերին՝ աշխարհի 55 երկրների շուրջ 2000 սփյուռքահայ կազմակերպությունների և անհատ գործիչների հետ[19], այդ թվում՝ 800 կազմակերպությունների, 280 դպրոցների, 80 հրատարակչությունների հետ և այլն[20]: 1968 թ. մարտի դրությամբ Կոմիտեն ակտիվ կապեր էր հաստատել սփյուռքահայ շուրջ 1000 կազմակերպությունների և ավելի քան 2000 անհատ գոր-

---

Հարությունյան), թատրոնի և կինոյի (նախագահ՝ Սարգիս Մելիքսեթյան), կերպարվեստի (նախագահ՝ Միհեր Աբեղյան):

[14] Այս հանձնախմբի հիմնական խնդիրներից մեկը աշխատանքն էր Հայաստանի բուհերի սփյուռքահայ ուսանողների շրջանում:

[15] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 7, թթ. 19-23:

[16] ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 3, թթ. 74-77, նույնի՝ ց. 2, գ. 2, թթ. 3-4:

[17] Նույն տեղում, ց. 1, գ. 25, թթ. 2-5:

[18] Նույն տեղում, ց. 2, գ. 2, թթ. 3-4:

[19] Նույն տեղում, գ. 9, թթ. 18-19:

[20] Նույն տեղում, թթ. 20-21:

ծիչների հետ[21], 1980-ական թթ. սկզբին՝ 50 երկրի 1020 կազմակերպությունների և 8000 անհատ գործիչների հետ[22]: 1990-ական թթ. Կոմիտեն համագործակցում էր շուրջ 70 երկրների ավելի քան 1000 հայկական միությունների և մոտ 10 հազար անհատ գործիչների (գիտնականներ, արվեստագետներ, գրողներ, լրագրողներ) հետ[23], որոնց ուղարկում էր տասնյակհազարավոր գրքեր, զանազան լուսանկարային հավաքածուներ, կինոֆիլմեր, ձայնապնակներ, լաբորատոր սարքավորումներ, դասագրքեր, թերթեր, ամսագրեր և այլ նյութեր:

Սփյուռքի կոմիտեի գործունեությունը ծավալվում և ակնառու էր մի շարք բնագավառներում, հատկապես կարևոր տեղ էր տրվում կրթամշակութային ծրագրերին: ՀԿԿ Կենտկոմի կողմից Կոմիտեն ցուցում ուներ «Համակողմանիորեն բարելավել սփյուռքահայ գաղութների երիտասարդության հետ աշխատանքը: Համակարգված երիտասարդական կազմակերպություններին ուղարկել խորհրդային պատանիների և աղջիկների կյանքի, ուսման, աշխատանքի և կենցաղի վերաբերյալ տարաբնույթ նյութեր: Այդ նպատակներով ուժեղացնել նաև հանրապետության ուսումնական հաստատություններում սովորող արտասահմանից հայ ուսանողների հետ աշխատանքը…:

Լուսավորության նախարարության ու Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության կոմիտեի հետ համատեղ համակարգված շրջանառել արտասահմանյան երկրներից ուսուցիչների հրավիրումը՝ որակավորման բարձրացման, ուսանողների՝ հանրապետության բուհերում ուսանելու, դպրոցականներին՝ պիոներական ճամբարներում հանգստի համար»[24]:

Այս ցուցումներին համապատասխան՝ Սփյուռքի կոմիտեն իրականացնում էր Սփյուռքում հայապահպանությանը, հայ ինքնության պահպանմանը նպաստող ծրագրեր: Այդ նպատակով ամեն տարի Կոմիտեի կողմից Սփյուռքում գործող հազարավոր մշակութային, մարզական կազմակերպություններին, հայրենակցական միություններին, դպրոցներին, ակումբներին, գրադարաններին ու հասարակական գործիչներին էին ուղարկվում հազարավոր օրինակ գեղարվեստական, հայագիտական, մանկական և այլ բնույթի գրականություն, դպրոցական լաբորատոր սարքավորումներ, հայկական երաժշտական գործիքներ, մարզական գույք, կինոնկարներ, տպագրական տառեր, ձայնապնակներ, հուշանվերներ, ձայնագրված ժապավեններ, Կոմիտեի տպագիր օրգաններ «Հայրենիքի ձայն», «Սովետական Հայաստան» պարբերականները, ինչպես նաև հայրենական թերթեր, ամսագրեր, լուսանկարային հավաքածուներ:

---

[21] *Նույն տեղում, գ. 2, թթ. 7-9:*

[22] *Հայրենիք-Սփյուռք. կամրջող անուն, Վ. Համազասպյան, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ (1964-1985): Փաստաթղթերի ժողովածու, Ե., 2011, էջ 10:*

[23] *«Հայ սփյուռք» հանրագիտարան, Ե., 2003, էջ 729:*

[24] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 7, թթ. 19-23:*

Կոմիտեի աջակցությունը Սփյուռքին միջին հաշվով տարեկան կազմել է մոտ մեկ ու կես միլիոնից երկու միլիոն ռուբլի[25]:

Առաջնային խնդիր համարելով համապատասխան ծրագրերի իրականացման միջոցով նպաստել Սփյուռքում հայկական դպրոցների պահպանմանը՝ Սփյուռքի կոմիտեն կապեր էր հաստատում Սփյուռքի հայկական դպրոցների հետ, ուղարկում հայաստանյան մասնագետներ դասավանդելու համար, կազմակերպում սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, տպագրում և անվճար առաքում դասագրքեր, դասական ուղղագրությամբ այբբենարաններ, հատկացնում ֆիզիկայի, քիմիայի և բնագիտության լաբորատորիաներ, սփյուռքահայ երեխաների մեջ հայրենասիրության սերմանման, Մայր հայրենիքին ծանոթացնելու նպատակով ամեն տարի ամռանը կազմակերպում էր սփյուռքահայ դպրոցականների հանգիստը տեղի ճամբարներում: Կոմիտեն մասնակցում էր նաև սփյուռքահայ դիմորդների ընտրության և ընդունելության գործին, միաժամանակ զբաղվում էր սփյուռքահայ ուսանողների հանգստի, կեցության և այլ հարցերով:

Կարևոր տեղ էր հատկացվում նաև օտարախոս հայերի, ինչպես և սփյուռքահայ երիտասարդական, մարզական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքներին:

1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո Կոմիտեի նախաձեռնությամբ Սփյուռքի կազմակերպությունների հետ իրականացվել են աղետի գոտու օգնության մի շարք նախագծեր:

1980-ական թթ. վերջերին և 1990-ական թթ. սկզբներին հանրապետությունում տեղի ունեցած արմատական փոփոխություն-ներն անդրադարձան նաև Սփյուռքի կոմիտեի գործունեության վրա: Խորհրդային Միության փլուզումը, Հայաստանի անկախացման գործընթացը նոր տեղաշարժերի հանգեցրին երկրում, փոփոխության ենթարկվեցին հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային ոլորտները, ինչպես նաև բազմաթիվ կառույցների գործունեության ձևերն ու որդեգրած քաղաքականությունը:

ՀՀ Նախարարների խորհրդի 1990 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 846 կարգադրությամբ ՀՀ Գերագույն խորհրդի արտաքին հարաբերությունների հարցերի հանձնաժողովի նախագահ Դ. Վարդանյանի գլխավորությամբ ստեղծվեց հանձնախումբ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կողմից արտաքին Սփյուռքի[26] կազմակերպությունների, հայկական բարեգործական

---

[25] *ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 43, թթ. 35-36:* **Մելիքսեթյան Հ. Ու.,** *Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., 1985, էջ 376:*

[26] *1990-ական թթ. նախկին ԽՍՀՄ հանրապետություններում գտնվող հայկական սփյուռքը պայմանականորեն անվանվեց ներքին սփյուռք, իսկ մնացած երկրների հայությունը՝ արտաքին սփյուռք:*

միություն-ների հետ կապերի զարգացման և պահպանման, արժութային գումարների նպատակային ծախսերի հարցերի ուսումնասիրման համար[27]:

Ուսումնասիրելով Սփյուռքի կոմիտեի 1989-1990 թթ. գործունեությունը՝ հանձնախումբը նշում է, որ կոմիտեն զգալի աշխատանք է կատարել Հայրենիք-Սփյուռք կապերի հաստատման, ամրապնդման, Սփյուռքի գաղթօջախներին հայրենի մշակույթի հետ ծանոթացնելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ հանձնախումբն անդրադառնում է Կոմիտեի սխալներին, որոնցից էին Սփյուռքի գաղթօջախներում գործող կուսակցությունների, հասարակական կազմակեպությունների և անհատների նկատմամբ Կոմիտեի ունեցած միակողմանի, դասակարգային ուղղվածության դիրքորոշումը, որի հետևանքով սփյուռքահայերի գերակշիռ մասը դուրս մնաց Հայրենիք-Սփյուռք փոխազդեցության ոլորտից, ինչպես նաև սրվել էին հակասությունները Սփյուռքի հայկական կուսակցությունների միջև: Նոր պայմաններում հանձնախումբն առաջնային է համարում Կոմիտեի հին գործունեության ձևերի փոփոխությունն ու Սփյուռքի և Հայրենիքի զանազան հայրենասիրական կազմակերպությունների հարաբերությունների բարելավումը:

Անդրադառնալով Կոմիտեի մշակութային գործունեությանը՝ հանձնախումբը նշում է, որ տարբեր երկրների հայ համայնքներ գործուղվող համերգային խմբերը հաճախ կազմավորվել են առանց մասնագիտական որոշակի մոտեցման, որի հետևանքով հայ մշակույթն ըստ արժանվույն չի ներկայացվել այդ երկրներում: Թերացումներ են արձանագրվում նաև համաշխարհային ճանաչում ունեցող հայազգի մշակութային գործիչներին Հայաստան հրավիրելու, սփյուռքահայ նկարիչների ցուցահանդեսները հայրենիքում կազմակերպելու հարցերում:

Ըստ հանձնախմբի՝ Կոմիտեն կապերի մեջ է եղել Սփյուռքի առնվազն 150 դպրոցների հետ, որոնց ուղարկվել են դասագրքեր և գեղարվեստական գրականություն: Փոխարենը մի շարք դպրոցների հետ կապեր գրեթե չէին եղել: Սփյուռքի դպրոցներ են գործուղվել փոքրաթիվ հայ մասնագետներ՝ հայոց լեզու և հայ գրականություն դասավանդելու և ուսուցիչներին օգնելու նպատակով: Որոշ դպրոցների հետ կապը սահմանափակվել է լոկ ժամանակ առ ժամանակ որոշ թվով դասագրքեր ուղարկելով, որոշ դեպքերում դպրոցները ստացել են ոչ անհրաժեշտ գրականություն: Ըստ հանձնախմբի ստուգումների մասին զեկուցագրի՝ Սփյուքի գաղթօջախների ներկայացուցիչները խիստ դժգոհ էին առաքված դասագրքերի որակից, ձևավորումից, բովանդակությունից, նրանցում օգտագործված մեթոդներից, բացի այդ, վերջին տարիներին սփյուռքահայ դպրոցները դասագրքերի վերանայման ձգձգման և թղթի պակասի պատճառով գրեթե դասագրքեր չէին ստացել:

Ըստ հանձնախմբի՝ անհրաժեշտ մակարդակի վրա չեն եղել նաև հայրենիքում վերապատրաստվող սփյուռքահայ ուսուցիչների հետ տարվող աշխատանքները.

---

[27] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 164, գ. 822, թթ. 1-2:*

Հայաստանում գտնվելիս նրանք ավելի շատ զբաղվել են զբոսաշրջիկությամբ, քան մասնագիտական որակավորման բարձրացմամբ, բոլոր ուսուցիչներն ունկնդրել են նույն դասախոսությունը՝ անկախ մասնագիտացումից:

Հայրենիք ուղարկվող դպրոցականների և բուհերում ուսանելու համար առաջադրված երիտասարդների ընտրությունը նույնպես միշտ չէ, որ կատարվել էր օբյեկտիվ չափանիշների հիման վրա:

Ուսումնասիրելով Կոմիտեի «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի և «Վերածնված Հայաստան» ամսագրի աշխատանքը՝ հանձնաժողովը եզրահանգում է, որ չնայած նախկինում եղած թերություններին՝ այդ պարբերականները հիմնականում կատարել են իրենց առջև դրված խնդիրները Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում[28]:

Հանձնախումբը նշում է նաև, որ կոմիտեն տնտեսական ասպարեզում ևս ունի թերացումներ: Սառեցված են աշխատանքները 100-ից ավելի գործող և մեծ ֆոնդեր ունեցող հայրենակցական միությունների հետ, որոնք ժամանակին որոշ աշխատանք են կատարել հայրենիքի տնտեսությանը օժանդակելու գործում: Ցածր մակարդակի վրա էին նաև հարաբերությունները ՀԲԸՄ-ի և Կյուլպենկյան ֆոնդի միջև: Հանձնաժողովը կարծում է, որ Սփյուռքի հետ գիտատեխնիկական և տնտեսական կապերի զարգացումը արդիական և կարևոր նշանակություն ունի Հայաստանի տնտեսական վիճակի բարելավման համար:

Ելնելով ստեղծված իրողությունից՝ ըստ հանձնախմբի, այսուհետ ևս Կոմիտեն պետք է ունենա հասարակական կազմակերպության կարգավիճակ, միաժամանակ անհրաժեշտ է Կոմիտեի կազմում կատարել հետևյալ փոփոխությունները[29]՝

ա) Կոմիտեին առաջարկել զբաղվել ներքին Սփյուռքի հարցերով.

բ) Կոմիտեն պետք է ունենա սփյուռքագիտության բաժին՝ համայնքների տնտեսագիտական և սոցիոլոգիական լայն հետազոտություններով զբաղվելու և դրանց վիճակի մասին ճշգրիտ պատկերացում կազմելու համար.

գ) Կոմիտեի կազմում ստեղծել մշակույթի բաժին, որը կազմակերպելու էր Սփյուռք ուղևորվող համերգային խմբերի նկարիչների և մշակույթի այլ գործիչների ընտրության գործընթացը.

դ) Սփյուռքի հայկական կրթօջախների հետ կապն ավելի հարուստ ու ամուր դարձնելու նպատակով Կոմիտեի կազմում ստեղծել Սփյուռքի դպրոցների և կրթական մյուս օջախների հետ կապի բաժին:

Այնուհետև Սփյուռքի կոմիտեն պետք է շարունակի՝

1. կազմակերպել սփյուռքահայ երեխաների ամենամյա այցերը Մայր հայրենիք.

---

[28] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 176, թթ. 10-26:*

[29] *Նույն տեղում:*

2. Սփյուռքի հայկական դպրոցներ ուղարկել համապատասխան մասնագետներ հայրենիքից.

3. հայրենիք հրավիրել ուսուցիչներ ավելի կատարելագործված ծրագրով վերապատրաստվելու համար.

4. կարճ ժամկետում բարելավել Սփյուռքի դպրոցներին ուղարկվող դասագրքերի որակը, քանակն ու առաքումը.

5. Սփյուռքի կոմիտեն, Սփյուռքի համապատասխան կազմակերպությունները, ԵՊՀ-ն, ՀՀ գիտությունների ակադեմիան պետք է համատեղ ծրագիր մշակեին Սփյուռքում հայ երիտասարդներին հայեցի բարձրագույն կրթություն տալու համար.

6. Կոմիտեն պետք է վերականգներ հայրենակցական միությունների հետ տարվող աշխատանքները:

ՀՀ Նախարարների խորհուրդը, ելնելով Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի 1989-1990 թթ. գործունեության ստուգման նպատակով ՀՀ Նախարարների խորհրդի 1990 թ. դեկտեմբերի 27-ի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունից և ստուգումներից, 1991 թ. մարտի 6-ին որոշում է ընդունում «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության մասին»[30]: ՀՀ Նախարարների խորհուրդն ընդունում է, որ Կոմիտեն նպաստել է Սփյուռքի և Հայրենիքի մերձեցմանը, նրանց միջև մշակութային կապերի զարգացմանը, գաղթօջախների համար պայմաններ է ստեղծել մոտիկից ծանոթանալու Հայաստանի հասարակական-քաղաքական, մշակութային կյանքին: Սակայն ամբողջատիրության պայմաններում Կոմիտեի աշխատանքները ղեկավարվել են հայ ժողովրդին խորթ գաղափարախոսության դիրքերից, որի պատճառով, բնականաբար, լուրջ խոչընդոտներ են առաջացել Սփյուռքի հետ կապերի հետագա զարգացման գործում, սփյուռքահայության զգալի մասը դուրս է մնացել Հայրենիք-Սփյուռք փոխգործողության ոլորտից: Լուրջ թերություններ են տեղ գտել Սփյուռքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների, բարեգործական և մյուս միությունների, ուսումնական հիմնարկների, լրատվական միջոցների հետ կապերի զարգացման գործում: Գաղթօջախներում չեն տարվել ծրագրավորված և նպատակամղված աշխատանքներ, պատշաճ մակարդակով չեն կազմակերպվել գիտամեթոդական աշխատանքները Սփյուռքի կրթօջախների հետ: Անբավարար է նյութական արժեքների, դրամական միջոցների հաշվառման և հսկողության, օտարերկրյա արժութային ֆոնդերի գոյացման ու նպատակային ծախսման դրվածքը, այդ գործում թույլ են տրվել թերություններ և խախտումներ:

---

[30] *Նույն տեղում, թթ. 1-3:*

Ելնելով ստուգումների արդյունքից՝ ՀՀ Նախարարների խորհրդի որոշմամբ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին հանձնարարվում էր 6 ամսում կատարել հետևյալ աշխա-տանքները՝

ա) Կոմիտեի պլենումում քննության առնել ՀՀ Նախարարների խորհրդի 1991 թ. մարտի 6-ի որոշումը, հանձնաժողովի ստուգման նյութերը և միջոցներ ձեռնարկել նշված թերությունների վերացման համար.

բ) ըստ ամենայնի ամրապնդել Հայրենիք-Սփյուռք բազմակողմանի կապերը՝ անկախ գաղութահայության քաղաքական ու կրոնական դավանանքներից.

գ) Կոմիտեի հետագա գործունեության ակտիվացման նպատակով արմատապես վերանայել կադրային, հատկապես ղեկավար կադրերի կազմը, կոլեկտիվը համալրել գործունյա և բանիմաց մասնագետներով.

դ) արմատապես բարելավել Կոմիտեի ֆինանսատնտեսական գործունեությունը, նյութական արժեքների պահպանման, օտարերկրյա արժութային գումարների ճիշտ և նպատակային ծախսման գործը: Ապահովել նվիրատվությունների ընդունման հրապարակայնությունը, ստեղծել դրանց պահպանման ու օգտագործման հստակ մեխանիզմ.

ե) քննության առնել Կոմիտեի համակարգում ներքին Սփյուռքի գծով համապատասխան ստորաբաժանում ստեղծելու հարցը՝ հանձնարարելով ներքին Սփյուռքին նպատակամղված օգնության կազմակերպումը:

ՀՀ Նախարարների խորհուրդը 1991 թ. սեպտեմբերի 4-ին ընդունում է «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության վերակառուցման միջոցառումների մասին» թիվ 539 որոշումը[31]: Արձանագրելով, որ Կոմիտեն իր գործունեության ընթացքում զգալի աշխատանք է կատարել Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման ուղղությամբ՝ ՀՀ Նախարարների խորհուրդը միաժամանակ նշում է, որ Հայաստանի Հանրապետությունում այդ ժամանակահատվածում տեղի ունեցող քաղաքական գործընթացները որակապես նոր խնդիրներ են դնում Կոմիտեի առջև, որոնք պահանջում են արդի փուլում համայն հայության ազգային շահերի ու նպատակների արտահայտման առումով նրա տեղի ու դերի հայեցակարգային ճշտորոշում: Ուստին՝ ՀՀ Նախարարների խորհուրդը որոշում է հավանություն տալ Կոմիտեի հետևյալ առաջարկներին՝

1. Ընդունել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի առաջարկը և այն վերանվանել Սփյուռքահայության հետ կապերի կոմիտե:

2. Նպատակահարմար համարել Կոմիտեի համակարգում լրացուցիչ ստեղծելու հետևյալ ստորաբաժանումները՝

---

[31] ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 528, թթ. 1-4: Հայրենիքի ձայն, 2.X.1991: ՀՀ Նախարարների խորհրդի 1991 թ. սեպտեմբերի 4-ի «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության վերակառուցման միջոցառումների մասին» թիվ 539 որոշումը ՀՀ կառավարության կողմից ուժը կորցրած է ճանաչվել 2000 թ. հունվարի 11-ի թիվ 4 որոշմամբ (http://www.arlis.am/documentview.aspx?docid=7697):

ա) ներքին Սփյուռքի բաժին՝ նրա վրա դնելով ներքին Սփյուռքի համայնքային ձևավորմանը նպաստելու, նրան նյութական ու բարոյական աջակցություն ցույց տալու խնդիրը.

բ) քաղաքագիտական հետազոտությունների և ծրագրավորման կենտրոն.

գ) լրատվական գործակալություն՝ ներքին և արտաքին Սփյուռքում սեփական թղթակիցների ցանցով տեղերում տեղեկատվություն ստանալու և օպերատիվ կերպով Սփյուռքի համայնքներին ու թերթերին հասցնելու համար:

3. Հանձնարարել ՀՀ հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեին՝ Սփյուռքահայության հետ կապերի կոմիտեի հետ համատեղ՝

ա) թողարկել Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին, արտերկրի հայ գաղթօջախների խնդիրներին, Սփյուռքի մշակույթի, պատմության հարցերին նվիրված երկշաբաթյա հեռուստահանդես՝ տրամադրելով անհրաժեշտ միջոցներ և հեռուստաթերային ժամեր.

բ) արտերկրի մշակութային կազմակերպությունների, ռադիոհեռուստաժամերի, կրթական հաստատությունների համար պատրաստել ուսուցողական, ճանաչողական, տեղեկատվական տեսաժապավեններ և ձայներիզներ:

4. ՀՀ արտաքին գործերի նախարարությանը և Սփյուռքի կոմիտեին՝ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները կատարելագործելու, անմիջական փոխհաղորդակցություն ապահովող արդյունավետ մեխանիզմ ստեղծելու նպատակով միջոցներ ձեռնարկել ներքին և արտաքին Սփյուռքի խոշոր գաղթօջախներում ունենալու Կոմիտեի լիազորներկայացուցիչներ՝ նրանց վրա դնելով Հայրենիք-Սփյուռք համագործակցության կարևոր ուղղություններով տարվող աշխատանքների համակարգումը, դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրավորումը և իրագործումը:

Այդ ստորաբաժանումները կազմալրելու համար Սփյուռքի կոմիտեին լրացուցիչ հատկացվելու էր 20 հաստիք, ինչպես նաև առաջիկա երկու-երեք տարում կրկնապատկվելու էին Կոմիտեին հատկացվող ֆինանսական միջոցները՝ հետագայում դրանք նվազեցնելով՝ Կոմիտեի տնտեսական գործունեությունից գոյացող սեփական եկամուտների աճին զուգընթաց:

Չնայած այս որոշմամբ Սփյուռքի կոմիտեի համագործակցության ոլորտներն ընդլայնվում էին, սակայն դեպքերի հետագա զարգացումը հանգեցրեց Կոմիտեի գործունեության էական սահմանափակման: Եթե խորհրդային ժամանակաշրջանում Կոմիտեն Սփյուռքի հետ հարաբերություններում բացառապես առաջնորդվում էր դասակարգային սկզբունքներով, ապա նոր պայմաններում Կոմիտեն հատկապես մեծ ուշադրություն դարձրեց ԱՊՀ երկրների հայ Սփյուռքի արդի վիճակին, քանի որ ազգային ինքնության պահպանման տեսանկյունից ամենախոցելի վիճակում նրանք էին. տարիների ընթացքում փակվել էին հայկական դպրոցները, հրատարակությունները, մոռացության վտանգի տակ հայտնվել ազգային սովորույթները: Այս ամենը հաշվի առնելով էր, որ 1991 թ.

մայիսին Սփյուռքի կոմիտեի նախաձեռնությամբ ստեղծվեց ներքին Սփյուռքի վարչությունը, որը բացառապես զբաղվում էր Ռուսաստանի և ԱՊՀ երկրների հայության հասարակական կյանքի կազմակերպման, հայկական ընկերությունների ձևավորման, կիրակնօրյա, շաբաթ-կիրակնօրյա դպրոցների բացման (դրանց թիվը 1991 թ. հասավ շուրջ 50-ի) հարցերով, այդ դպրոցները դասագրքերով, մեթոդական նյութերով, գրականությամբ ապահովելու, ուսուցիչների վերապատրաստման դասընթացների, հայրենիքից մայրենի լեզվի ուսուցիչներ գործուղելու, հայերեն չիմացող մեր հայրենակիցներին հայերենի արագացված ուսուցման դասընթացների միջոցով մայրենի լեզվին հաղորդակից դարձնելու, հայ պարբերական մամուլի նյութերի ինֆորմացիոն տեղեկագրերի և թերթերի առաքման աշխատանքներով:

1991 թ. Հայաստանի անկախության հռչակումը, հանրապետությունում ծավալված քաղաքական և տնտեսական զարգացումները հնարավորություն տվեցին Կոմիտեին ձերբազատվելու անցյալի գաղափարական կապանքներից: 1991 թ. Ընդհանուր ժողովում ընդունած իր նոր կանոնադրությամբ[32] Կոմիտեն մերժում էր խտրական մոտեցումը սփյուռքահայ տարբեր քաղաքական հոսանքների նկատմամբ, կարևորում համագործակցությունը բոլոր քաղաքական ուժերի, հասարակական կազմակերպությունների և կրոնական կառույցների հետ՝ անկախ նրանց գաղափարական համոզմունքներից ու կրոնական դավանանքներից: Նոր կանոնադրությամբ արձանագրվեց, որ Կոմիտեն ինքնակառավարվող, ապակուսակցական, քաղաքականապես չեզոք հասարակական կազմակերպություն է: Սակայն նոր պայմաններում Կոմիտեն աստիճանաբար զրկվեց Սփյուռքի հետ կապեր հաստատելու իր մենաշնորհից: 1992 թ. հուլիսից պետական ֆինանսավորման դադարեցումից հետո այն փաստորեն զրկվեց իր կանոնադրական խնդիրները կատարելու հնարավորությունից՝ կորցնելով իր երբեմնի նշանակությունն ինչպես հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում՝ հանգեցնելով Կոմիտեի գործունեության դադարեցմանը[33]:

---

[32] ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 76, թթ. 1-12:

[33] Համարվում է, որ Կոմիտեն դադարել է գործել 1998 թ. («Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 730):

ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНСКОЙ ДИАСПОРОЙ

ПЕТРОСЯН К. Р.

Резюме

Комитет по культурным связям с армянской диаспорой играл активную роль в укреплении связей Родина-Диаспора. Основанный в мае 1964 г. комитет Диаспоры стал одним из ведущих учреждений в Советской Армении. За короткий период комитет Диаспоры установил связи со многими организациями, патриотическими, культурными союзами, школами, редакциями газет и журналов, с библиотеками, клубами, а также с отдельными деятелями Диаспоры.

По новому уставу, принятому в 1991 г., намного расширилась сфера сотрудничества комитета Диаспоры, но дальнейшее развитие событий привело к существенному ограничению его деятельности. С июля 1992 г., когда было прекращено государственное финансирование, Комитет не мог выполнять свои уставные задачи и потерял свою былую значимость как на родине, так и в Диаспоре, и таким образом деятельность Комитета была приостановлена.

FROM THE HISTORY OF THE ACTIVITIES OF THE COMMITTEE FOR CULTURAL RELATIONS WITH THE ARMENIAN DIASPORA

K. PETROSYAN

Abstract

The Committee for Cultural Relations with the Armenian Diaspora played an active role in strengthening the Motherland-Diaspora ties. Founded in May 1964, the Committee of Diaspora became one of the leading institutions in Soviet Armenia. In a short period, the Committee of Diaspora established links with many organizations, patriotic, cultural associations, schools, editorings of newspapers and magazines, libraries, clubs, as well as with individual figures of Diaspora.

Under the new charter, adopted in 1991, the areas of cooperation of the Diaspora Committee were expanded, but further developments led to a substantial restriction of the activities of the Committee. In the new circumstances, the Committee lost its monopoly on the establishment of links with the Diaspora, and in July 1992 after the suspension of public funding, was deprived of the opportunity to fulfill its statutory tasks, losing its former importance both in the Homeland and in the Diaspora, which led to the suspension of the activities of the Committee.